

ԱՐԱՐԱԿԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ԱՐՄԻՆԻՅԱՅԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՀԵՏ¹

ԱՐՍԷՆ ՇԱՀԻՆԵԱՆ (a.shaginyan@spbu.ru)

ՄՈՒՏՔ

Հայագիտությունում եւ արաբագիտությունում տիրապետող է այն տեսակետը, թէ հայոց գահերէց իշխան Թէոդորոս Ռշտունին, 652ին՝ Ուսման խալիֆի (644-56) փոխարքայ Մու'աւիյա իբն Աբու Սուֆիանի հետ կնքելով խաղաղութեան պայմանագիր, Արաբական Խալիֆայութեան հպատակութեան եւ իրաւասութեան տակ դրեց մինչ այդ միմիայն Բիւզանդական Կայսրութիւնից կախեալ հայոց, ինչպէս նաեւ՝ վրաց եւ աղուանից ինքնավար կազմաւորումները:

Սակայն սոյն յօդուածով մենք առաջին անգամ գիտական շրջանառութեան մէջ ենք դնում աւելի վաղ շրջանին վերաբերող մէկ այլ փաստաթուղթ, որը իրաական ձեւակերպում էր տալիս խալիֆայութեան յարաբերութիւններին՝ Հայքում եւ Հարաւային Կովկասում բնակուող քրիստոնէաների հետ: «Մահմեդական պատմահայր», արաբախօս իրանցի ատ-Տաբարիի (838–923) մօտ ամբողջութեամբ բանաքաղուող, Հիջրայի 22ով (642/3) թուագրուող եւ ակադեմիական գրականութիւնում առաջին անգամ մեր կողմից ուսումնասիրուող՝ Ումառ խալիֆի (634–44) տեղապահ Սուրակա իբն Վմրիի տուած, թուղթը հասցէագրուած էր Արմինիային՝ նկատի ունենալով քրիստոնէայ երեք իշխանութիւնների բնակիչներին: Մեր հետազօտութեան նպատակն է նաեւ պարզել թէ ով էր սոյն հրովարտական «ալ-Բաբի արքայ, Շահրբարազի» տակ թաքնուածը, որի առկայութիւնն, ըստ մեզ, պատճառ է հանդիսացել, որ բոլոր ուսումնասիրողները խուսափէին մինչ օրս այսպիսի վերլուծութեան ենթարկել տուեալ փաստաթուղթը:

Հայոց գահերէց իշխան Թէոդորոս Ռշտունին (640–մօտ. 659), ով, Սեբեոսի վկայութեամբ, Բիւզանդիայի կայսեր Կոստանդ Բ.ի (641–68) կողմից էր հաստատուել «պատրկութեան պատուով»², 652ին բանակցութիւնների նպատակով մեկնեց Դամասկոս, քանզի արաբները յաճախակի էին ներխուժում հայոց իշխանութեան³ սահմաններն: Արդիւնքում՝ Թէոդորոսը

¹ Funding: The reported study was funded by RFBR, project number 20-09-00010:

² «Պատմութիւն Սեբեոսի», *Մատենագիրք հայոց, հոր. Դ. (Է. դար)*, Տպ. Մեծի Տանն Կիլիկիոյ Հայոց Կաթողիկոսութեան, Անթիլիաս-Լիբանան, 2005, էջ 532:

³ Դրա կազմաւորման շուրջ տե՛ս՝ Արսէն Շահինեան, «Հայոց ինքնավար իշխանութեան տարածքն ու սահմանները Է. դարում», *Journal of the Society for Armenian Studies*, 2011:20, էջ 55-68. նաեւ՝ Արսէն Շահինեան, «Է. դարի Հայոց

աշ-Շամում (Ասորիք եւ Պաղեստին) եւ ալ-Ջազիրայում (Վերին Միջաքստը)՝ Ումման խալիֆի փոխարքայ Մու'ալիյա իբն Աբու Սուֆիանի հետ խաղաղութեան պայմանագիր կնքեց, որը ուղղուած էր ընդդէմ Բիզանդիայի⁴:

Ակադեմական գրականութիւնում տիրապետող է այն տեսակէտը, թէ սոյն դաշինքը՝ առաջին փաստաթուղթն էր, որը Արաբական Խալիֆայութիւնը կնքել էր հայոց իշխանութեան հետ: Ամբողջական փաստաթուղթը, որը, մեր խորին համոզմամբ, Թէոդորոսը ստորագրում էր նաեւ խղուանից ու վրաց իշխանութիւնների⁵ անունից⁶, գրի է առել Սեբէոսը⁷:

Չնայած հայ-արաբական դաշինքի աշխարհաքաղաքական նշանակութեանը՝ մահմեդական հնագոյն մատենագիրների մօտ ակնարկ անգամ չեւ գտնի դրա կնքման վերաբերեալ: Մինչդէռ «մահմեդական պատմահայր», արաբախօս իրանցի առ-Տաբարին *تاريخ الرسل والملوك* (Պատմութիւն մարգարէից եւ թագաւորաց)ում վկայակոչելով Քուֆայից յայտնի պատմիչ Սայֆ իբն Ռամա առ-Տամիմին⁸, յիշատակում է մէկ այլ, աւելի վաղ պայմանագրի մասին՝ կնքուած Արմինիայի (أرمينية) բնակիչների հետ: Սրա տակ արաբա-մահմեդական պատմագրական ու աշխարհագրական դպրոցների հիմնադիրները (Թ.—Ժ. դդ.) նկատի ունէին ո՛չ միայն Հայոց Աշխարին, այլեւ՝ աղուանից (أران ['Arrān] կամ էլ الزان [ar-Rān]⁹) եւ վրաց (جوزان [Ǧurzān]) իշխանութիւնները: Բանն այն է, որ միքանի տասնեակ տարիներ անց՝ Ը. դարասկզբում, երբ երեքն էլ նուաճուեցին, կազմեցին

իշխանութեան ինքնիշխանացումը”, *Հայկազեան հայագիտական հանդէս, հոր.* ԼԳ., 2013, էջ 165-80:

⁴ Մանրամասն տե՛ս՝ Rev. Manuel Jinbashian, “The Arabo-Armenian Peace Treaty of a.d. 652” *Haigazian Armenological Review*, Vol. 6, 1977, էջ 169-74: Ըստ մեր հաշուարկի, փաստաթղթի ստորագրումը տեղի է ունեցել 652ի Օգոստոսի վերջին (Арсен Шагинян, *Армения и страны Южного Кавказа в условиях византийско-иранской и арабской власти* (Հայաստանը եւ Հարաւային Կովկասի երկրները բիզանդա-իրանական եւ արաբական գերիշխանութեան պայմաններում), Բիզանդական գրադարան մատենաշար, Ուսումնասիրութիւններ, «Ալետէյա», Սանկտ Պետերբուրգ, 2011, էջ 115-16):

⁵ Դրանց կազմաւորման շուրջ տե՛ս՝ Արսէն Շահինեան, «Ժառանգական իշխանութիւնների կազմաւորումն Իրանի քրիստոնէայ մարզպանութիւններում Բիզանդիայի հետ հակամարտութեան աւարտական փուլում (2. դարավերջ-Է. դարասկզբ)», *ՎԷՄ համահայկական հանդէս*, ԺԱ(ԺԵ):1(65), Յունուար-Մարտ, 2019:

⁶ Բանն այն է, որ տարածաշրջանի գահերէց իշխանների միջեւ հաստատուել էր նուիրապետական, վասալասիւզերէնական կախումաւորութիւն՝ Թէոդորոսի հովանու ներքոյ (Շահինեան, “Է. դարի հայոց”, էջ 169-170):

⁷ «Պատմութիւն Սեբէոսի», էջ 554:

⁸ Մահացել է Հռոմն առ-Ռաշիդի օրօք (786-809), հեղինակել է *كتاب الفتوح الكبير والرتبة* (Խոշոր նուաճումների եւ հաւատարացների մասին գիրք)ը:

⁹ Արմատի առաջին երկու տառերը հանդէս են գալիս որպէս որոշիչ յօդ:

Արաբական Խալիֆայության Արմինիյա միացեալ նահանգը¹⁰: Ատ-Տաբարիի մօտ Հիջրայի 22-րդ թուագրութի (642ի Նոյեմբերի 30ից մինչև 643ի Նոյեմբերի 18ը) իրաական փաստաթուղթը ամբողջովին բանաքաղում է «Դերբենդի նուաճումը» ընդարձակ գլխում¹¹ *الفتح الباب*:

Նշենք, որ ատ-Տաբարիի շուրջ 30 հատորից բաղկացած ծաւալուն ու ընդգրկուն երկում չես գտնի *ʿArrān* տեղանունը, որի սահմանները հիւսիսում ձգւում էին մինչև Կովկասեան Լեռնաշղթայ ու Դերբենդ (*արաբ. al-Bāb* - բառացի՝ «դարպաս», *الباب والأبواب* [al-Bāb wa-l-ʿAbwāb] - բառացի՝ «դարպասների դարպաս»՝ «գերագոյն, խոշորագոյն դրապասներ» իմաստով), մինչդեռ իսլամական աշխարհի իւրաքանչիւր պամիշ կամ աշխարհագիր լայնօրէն կիրառում էր այն: Դրանից ելնելով ենթադրում ենք, որ *al-Bāb* տեղանուամբ «մահմեդական պատմահայր»ը նկատի ունէր ողջ Առանը (Աղուանք), որտեղից որ բացւում էին «դռներն» դէպի հեթանոս Խաղիքի անծայրածիր տափաստանները: Բացի այդ, «Դերբենդի նուաճումը» գլխում կայ մի դրուագ թէ «al-Bāb»-ի եւ (Դերբենդի) պատի՝ «al-Bāb wa-l-ʿAbwāb»-ի միջեւ ընկած էին միքանի այսպէս կոչուած արքաների տիրոյթներ¹²: Դերբենդի հզօր պաշտպանիչ ամրութիւնները կովկասեան բարձրադիր լեռներում - հիմնադրուած սասանեան շահինշահ Խոսրով Ա. Անուշիրվանի (531-79) օրօք - հաւանական է, այնպիսի տպաւորիչ ազդեցութիւն էին թողել Արաբիայի անապատներից դուրս եկած մահմեդական զաւթիչների վրայ, որ ատ-Տաբարիի սկզբնաղբիւրների հեղինակները ողջ Աղուանքը մինչև այդ կառոյցները «al-Bāb» էին կոչում¹³: Չի բացառում, որ սա «դուռն Աղուանից» տեղանուան հակիրճ ձեւն է, որը, Սեբէոսի պնդմամբ, կիրառում էր 590ին Տիգրանում շահինշահի գահը իւրացրած

¹⁰ Արսէն Շահինեան, «Արմինիյա արաբական նահանգի սահմաններն ու վարչատարածքային բաժանումը ըստ արաբագիր սկզբնաղբիւրների», *Հայկազեան հայագիտական հանդէս, հրր. Լ.*, 2010, էջ 319-28:

¹¹ Սոյն գլխի, որը հաղորդում է «Ատրպատականի նուաճումը» (*فتح آذربيجان* [Fath Ādarbayğān]), ենթահոդից դատելով, «al-Bāb»-ի փոխարէն պէտք է որ «ʿArminiya»-ն լինէր: Հենց այդպէս է խորագրուած համապատասխան գլուխը մէկ այլ արաբագիր պատմիչ ալ-Բալաճուրիի (մահ. 892) «Երկրների նուաճման գիրք»ում (*كتاب فتوح البلدان* [Kitāb Futūḥ al-Bulḍān]) (*Liber expugnationis regionum auctore Imamo Ahmed ibn Jahja ibn Djabir al-Beladsori* (*الإمام أحمد بن يحيى بن جابر*) (*البلاذري*), ed. M. de Goeje, Lugduni Batavorum, 1866, էջ 193-212):

¹² *Annales quos Scripsit Abu Djafar Mohammed ibn Djarir at-Tabari* (*تاريخ الرسل والملوك*) (*أبى جعفر محمد ابن جرير الطبري*), cum aliis ed. M. de Goeje, Ser. I, Lugduni Batavorum, 1879-1898, էջ 2669-70:

¹³ Ահա թէ ինչպէս է նկարագրուած ատ-Տաբարի մօտ. «*երկու լեռների միջեւ [կառուցուած էր] պաշտպանիչ պար. նախ այն ձգւում էր նրանց հեղի նոյն մակարդակի վրայ, ապա երկու լեռներից էլ վեր էր խոյանում*» (նոյն, էջ 2670):

Վահրամ Չորինը՝ հայոց սպարապետ Մուշեղ Մամիկոնեանին հասցեագրած թղթում¹⁴:

Ահա եւ ատ-Տաբարիի մօտ բանաքաղուող բնագրի ամբողջական տարբերակը (շարադրուած «Իսլամական Ոսկեդար»ի մատենագիրների աւանդական ոճով), որը, ի տարբերութիւն *Պատմութիւն Սերէնսի*ում տեղ գտած պայմանագրից, արաբագէտների կամ հայագէտների կողմից երբեւէ չի ուսումնասիրուել եւ ընդհանրապէս ուշադրութեան չի արժանացել¹⁵:

يَسْمُ اللَّهُ الرَّحْمَنُ الرَّحِيمُ. هذا ما أعطى سراقَةَ بن عمرو عامل أمير المؤمنين عمر بن الخطاب شهربراز وسكان أرمينية والأرمن من الأمان، أعطاهم أمانًا لأنفسهم وأموالهم وملتهم ألا يضاروا ولا ينتقصوا، وعلى أهل أرمينية والأبواب؛ الطّراء منهم والتّقاء ومن حولهم فدخل معهم أن ينفروا لكل غارة، وينفذوا لكل أمر ناب أولم ينب رأه الوالي صلاحًا؛ على أن توضع الجزاء عمّن أجاب إلى ذلك إلا الحشر، والحشر عوضٌ من جزائهم ومن استغنى عنه منهم وقعد فعليه مثل ما على أهل أذربيجان من الجزاء والدلالة والتّزل يومًا كاملاً، فإن حشروا وضع ذلك عنهم، وإن تركوا أخذوا به. شهد عبد الرحمن بن ربيعة، وسلمان بن ربيعة، وبكير بن عبد الله. وكتب مرصي بن مقرّن وشهد¹⁶.

Յանուն ամենագութ, ամենողորմ Ալլահի: Սա այն երաշխատրագիրն է, որը հասցեագրեց Սուրակա իբն 'Ամրը' հաւատացելոց իշխան 'Ումար իբն ալ-Խատտաբի փոխարքան, Շահրբարագին, Արմինիյայի բնակիչներին ու հայերին: Երաշխատրում եմ ես նրանց անձերի, ունեցուածքների եւ հաւատքի նկատմամբ անձեռնմխելիութիւն, միայն եթէ չդիմադրեն ու չխախտեն [պայմանագիրը]: Արմինիյայի եւ [ալ-Բաբ ուա-]լ-Աբուաբի բնակիչներն, ինչպէս հեռուից եկածներն, այնպէս էլ տեղացիներն ու նրանք, ովքեր որ շրջակայքերից են, բայց մուտք են գործել [քաղաք], պարտատրում են մասնակից լինել բոլոր արշաւանքներին, կատարել բոլոր հրամանները՝ ընդունելի են դրանք, թէ ոչ, եթէ կառավարիչ ['Աբդ առ-Ռահման իբն Ռաբի'ան] դրանք հարկատր է համարել: Գլխահարկից¹⁷ ազատում են միայն նրանք, ովքեր որ համաձայն են եւ պատրաստ [զինուորական] հաւաքների: Այսպիսով, [զինուորական] հաւաքները փոխարինում են իրենց համար գլխահարկը: Սակայն նրանք, ովքեր, որ հեռացուեն [ծառայութիւնից], կամ էլ՝ խուսափեն, պարտատրում են կատարել նոյն պայմանները, որոնք դրուած են

¹⁴ «Պատմութիւն Սերէնսի», էջ 480:

¹⁵ Միայն խորհրդային գիտնականներ Զիա Բունիաթովի եւ Անատոլիյ Նովոսելցեւի մօտ կարելի էր գտնել գրառումներ առ այն, որ Դերբենդ «քաղաքի բնակիչների հետ կնքուել է պայմանագիր, որը համահունչ էր Ադրբեջանի հետ կնքուած համաձայնագրին» (Зия Буниятов, *Азербайджан в VII–IX вв.* (Ադրբեջանը Է.-Թ. դարերում), Ադրբեջանական ԽՍՀ ԳԱ, Բաքու, 1965, էջ 82): Կամ՝ «...Դերբենդը [յանձնուեց] հարկերից ազատուելու եւ այն հիւսիսային թշնամիներից պաշտպանելու պարտատրութիւնների դիմաց» (Анатолий Новосельцев, *Хазарское Государство и его Роль в Истории Восточной Европы и Кавказа* (Խազարների պետութիւնը եւ նրա դերը Արեւելեան Եւրոպայի եւ Կովկասի պատմութիւնում), ԽՍՀՄ ԳԱ «Գիտութիւն», Մոսկուա, 1990, էջ 102):

¹⁶ *Annales quos scripsit Abu Djafar*, էջ 2665–66:

¹⁷ Բնագրում՝ յոգ. թ. الجزاء [al-ğizā'], եգ. թ. الجزية [al-ğizya-ʿ]:

Ադրբեջանի բնակիչների վրայ. այն է՝ գլխահարկի վճարում, [մահմեդականներին] ուղեկցում եւ հիւրընկալում ողջ օրուայ ընթացքում: Եթէ նրանք մասնակցում են [զինուորական] հաւաքների, ապա ազատում են այս [ամէնից], իսկ եթէ հրաժարուն են [ստանձնած պարտաւորութիւններից], ապա կը ձերբակալուն: Վկայ են 'Աբդ առ-Ռահման իբն Ռաբի'ան, Սալման իբն Ռաբի'ան եւ Բուկայր իբն 'Աբդ Ալլահը: [Թուղթը] կազմեց Մարդի իբն Մուկարրինը, ով նոյնպէս վկայեց¹⁸:

Սոյն փաստաթղթի պայմաններից դատելով՝ ողջ Արմինիայի բնակիչները, այդ թւում նաեւ ալ-Բաբ ուալ-Աբուաբի (Դերբենդի, պէտք է հասկանալ Առանի), ընդունում էին Արաբական Խալիֆայութեան հպատակութիւն: Ստանալով կեանքի, գոյքի եւ հաւատքի նկատմամբ անձեռնմխելիութեան երաշխիքներ՝ քրիստոնեաներից բաղկացած այս նոր հպատակները ստանձնում էին զինուորական ծառայութեան պարտաւորութիւն՝ մասնակից դառնալով իսլամի թշնամիների դէմ կատարուող արշաւանքներին, կամ էլ ազատուել բանակից՝ դրա դիմաց վճարելով ամէնամեայ գլխահարկը (ջիզիա) արաբ նորանշանակ կառավարիչ 'Աբդ առ-Ռահման իբն Ռաբի'այի օգտին:

Համադրելով այս երաշխատրագրի (*ամանի*) դրոյթները այն պայմանների հետ, որոնք *Պատմութիւն Սեբէսիի* պայմանագրում էին տեղ գտել՝ յստակ կարող ենք փաստել, որ գործ ունենք երկու տարբեր իրաւական փաստաթղթերի հետ: Միայն մէկ ընդհանուր կէտ կար երկուսում՝ Բիւզանդական Կայսրութեան հովանու ներքոյ գտնուող Արմինիայի քրիստոնեայ բնակչութիւնը ընդունում էր Արաբական Խալիֆայութեան հպատակութիւն¹⁹:

Չնայած «Պատմութիւն մարգարէից եւ թագատրաց»ում տեղ գտած փաստաթղթի կարեւորութեանը՝ մեզ բոլոր յայտնի հետազօտողները անտեսել են այն, կարծում ենք մի պարզ պատճառով, որ այնտեղ աչքի են ընկնում բաղարկութիւն ու ժամանակավրէպութիւն: Ալ-Բաբ ուալ-Աբուաբի (Դերբենդի), պէտք է հասկանալ Առանի, եւ ամբողջ Արմինիայի բնակիչների անունից պայմանագիր է կնքում Շահրբարազը (Շահր-Վարազը), ով պատմագրութիւնում քաջ յայտնի է որպէս սասանեան շահինշահ Խոսրով Բ. Փարսիզի (590–628) օրօք խոշոր զօրավար: Նա հռչակ ձեռք բերեց բիւզանդապարսկական «քսանհինգամեայ պատերազմում» (603–28), երբ 613ին նուաճեց Դամասկոսը, իսկ 614ի Մայիսին՝ Երուսաղէմը՝ գերելով Տէրունական Խաչը: Սասանեան Արմինան (*պահլ. Arminān*) եւ Առան

¹⁸ Ուշագրաւ է այն փաստը, որ ե՛ւ փոխարքայ Սուրակա իբն 'Ամրը, ե՛ւ ալ-Բաբում նորանշանակ 'Աբդ առ-Ռահման իբն Ռաբի'ա կառավարիչը, ունէին նմանատիպ մականուն՝ «Լուսաւոր» (ذو النور [Dū an-Nūr]) (*Annales quos scripsit*, էջ 2663):

¹⁹ 652ին կնքուած հայ-արաբական դաշինքի պայմանների վերլուծութիւնը տե՛ս՝ Շահինեան, «Է. դարի Հայոց Իշխանութեան», էջ 169-71:

(*պահլ. Arrān*) մարզպանություններում հետապնդելով կայսեր Հերակլին (610-41)՝ Շահր-Վարազը 626ին նոյնիսկ սպառնում էր Կոստանդնուպոլսին: Վերջապես, նա սպանուեց 630ին Տիգրանում՝ արքայական գահին ապօրինի տիրելուց քառասուն օր անց²⁰:

Ակադեմական գրականությունում ճշգրտում է, որ Շահր-Վարազը, լինելով ոմն Արտաշիրի (*պահլ. Ardaxšir*) որդին, ներկայացնում էր պարթևական Միհրանեան (*պահլ. Mihrān*) ազնուական տոհմը²¹, որը մինչև Խոսրով Անուշիրվանի 530ականների բարեփոխումները ժառանգաբար զբաղեցնում էր Իրանի սպարապետի (*պահլ. 'išbahbad*) պաշտօնը:

Այս ամենի մասին վկայակոչելով Է. դարասկզբի սասանեան հեղինակներին գրում են Թ.-Ժ. դարերի մահմեդական շատ հեղինակներ, եւ ոչ միայն նրանք՝ նախախլամական Պարսկաստանի հարուստ պատմությունը շարադրելիս. ատ-Տաբարին էլ բացառություն չէ²²: Աւելին, նա յստակեցնում է այն, որ «Շահր-Բարազ»ը (*արաբ. شهر براز* [*Šahr Barāz*])²³ դա անուն չէ, այլ՝ մակդիր): Զօրավարի իրական անունը, ով հռչակ ձեռք բերեց հռոմեների հետ պարսիկների վարած պատերազմում, Ֆառուխան (Ֆառուխան) էր²⁴: Ժամանակակից Սեբեոսի մօտ՝ Խոռդիամ, որ է Ըռազման կամ էլ՝ Ըռազմիոզան²⁵: Բանն այն է, որ «1234 թ. Ասորական անանուն ժամանակագրություն»ում Խոսրով Փարիզը, դիմելով իր զօրավարին, յայտա-

²⁰ James Howard-Johnston, “Kosrow II” (Last Updated: March 15, 2010), *Encyclopaedia Iranica, Online Ed.* <https://iranicaonline.org/articles/khosrow-ii> (Retrieved 15 November 2020):

²¹ Parvaneh Pourshariati, *Decline and Fall of the Sasanian Empire: the Sasanian-Parthian Confederacy and the Arab Conquest of Iran*, I.B.Tauris & Co Ltd., London & New York, 2008, էջ 181:

²² *Annales quos scripsit*, էջ 1002–63:

²³ Շահրվարազ (բառացի՝ «արքունեաց վարազ») < *իրան. *šahr* (բառացի՝ «պետություն») + **warāz* («վարազ կենդանի»):

²⁴ *Annales quos scripsit*, էջ 1002:

²⁵ «Պատմություն Սեբեոսի», էջ 507, 512: Սեբեոսը սրան կոչում է նաեւ Շահր Վարազ (նոյն, էջ 519-20, 522), իսկ Աղուանքի Կաղանկատոյք գիւղից նրա ժամանակակցը՝ Շահ Վարազ/Շահվարազ («Անանուն Կաղանկատուացի, Վիրոյ կաթողիկոսի պատմություն», *Մատենագիրք, հպր. Դ.*, էջ 376, 379, 387 եւ 411): Բիզանդական գրական աւանդոյթում նա յայտնի էր որպէս Σάββαρος (*Nicephori Archiepiscopi Constantinopolitani Opuscula Historica*, ed. C. de Boor, Accedit Ignatii diaconi vita Nicephori, Lipsiae, Teubner, 1880, էջ 15-21) կամ էլ՝ Σαββαράζαν (*Theophanis Chronographia*, ex recensione Ioannis Classeni, 1-2, Bonnae, Impensis E. Weberi, 1839-1841, vol. I, էջ 476-80):

րարում է. «Այսուհետ ես քեզ չեմ կոչի Ռումիազան, այլ՝ Շահրբարազ, այսինքն (արքունեաց - Ա.Շ.) վարագ»²⁶:

Այդ իսկ պատճառով խորհրդային խազարագիտության հիմնադիր Միխայիլ Արտամոնովը, արաբագետ Արամ Տերղետնդեանը եւ իրանագետ-կովկասագետ Անատոլիյ Նովոսելցեյը, վկայակոչելով ատ-Տաբարիին, վստահորեն գրում էին թէ արաբական առաջապահ զորքը 'Աբդ առ-Ռահման (իբն Ռաբի'այի) գլխատրութեամբ, Հիջրայի 22ին (642/3ին) հասնելով Դերբենդ, գործ ունէր Շահրվարազ/Շահրբարազ անունով սասանեան բերդակալի կամ էլ կուսակալի հետ²⁷: Յաւօք, նրանք պատշաճ ուշադրութեան չեն արժանացրել այն փաստը, որ ատ-Տաբարին, վկայակոչելով մէկ այլ սկզբնաղբիւրի, նշում է թէ այդ օրերին ալ-Բաբի մարգբանն էր, այլ կերպ ասած՝ սասանեան վարչակազմի ղեկավարը, Բինդաւանը՝ Ռուստամ (Ռոստամ) սպարապետի եղբայրը²⁸:

Նշենք, որ Դաղստանից յայտնի արաբագետ Ամրի Շիխսայիդովը, ատ-Տաբարիի երկի «Դերբենդի նուաճումը»ից քաղուածքներ թարգմանելիս, հարկ չի համարել մեկնաբանել բնագրում տեղ գտած «Շահրբարազ» անունը²⁹, իսկ ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս Բորիս Ռիբակովը, վկայակոչելով «Պատմութիւն մարգարէից եւ թագաւորաց»ի 963ին սասանեան վեզիր Մուհամմադ Բալ'ամի կողմից հեղինակած պարսկերէն համառօտ տարբերակին, որտեղ «Šahrbarāz»ը փոխարինուած է شهریار [Šahrīyār]³⁰ով (բա-

²⁶ «Non iam vocaberis Rumiazan, sed Šahrbaraz, id est aper silvestris» (*Chronicon anonymi auctoris chronicon ad annum Christi 1234 pertinens*, ed. by Jean-Baptiste Chabot, Louvain, L. Durbecq, 1917, էջ 174):

²⁷ Михаил Артамонов, *История Хазар* (Խազարների պատմութիւն), Պետ. էրմիտաժ, Լենինգրադ, 1962, էջ 177. նաեւ՝ Арам Тер-Гевондян, *Армения и Арабский Халифат* (Հայաստանը եւ Արաբական Խալիֆայութիւնը), ՀԽՍՀ ԳԱ, Երեւան, 1977, էջ 44. նաեւ՝ Новосельцев, էջ 172–75:

²⁸ *Annales quos scripsit*, էջ 2251:

²⁹ Амри Шихсаидов, *Книга Ат-Табари “История Посланников и Царей” о Народах Северного Кавказа* (“Պատմութիւն մարգարէից եւ թագաւորաց” ատ-Տաբարիի գիրքը Հիւսիսային Կովկասի ժողովուրդների մասին), Памятники истории и литературы Востока: период феодализма, ԽՍՀՄ ԳԱ «Գիտութիւն», Մոսկուա, 1986, էջ 73:

³⁰ *Chronique de Abou-Djafar-Mohammed-ben-Djarir-ben-Jazid Tabari*, trad. sur la version persane d'Abou-Ali Mo'hammed Bel'ami par H. Zotenberg, 4 tomes, Paris, Imprimerie impériale, 1867–74, t. I, էջ 194: Շահրիար անունն առկայ է նաեւ արաբ պատմիչ Իբն ալ-Ասիրի (1160–1233) «Դերբենդի նուաճումը»ի բանաբաղուած պատմութեամբում (*Ibn al-Athir, al-Kamil fi-l-Tarikh* (ابن الأثير. الكامل في التاريخ): In 9 vols., al-Qahira, [S.I.], 1353 A.H. / 1934/5 A.D. vol. 1, էջ 14):

ռացի՝ «թագաւոր», «[այլ] երկրի կառավարիչ» իմաստով), կոչել է նրան «Դերբենդի իշխան»³¹:

Հեղինակաւոր գիտնականները պատշաճ ուշադրութեան չեն արժանացրել ատ-Տաբարիի կարեւոր այլ մանրութներ եւ: Նախեւառաջ «մահմեդական պատմահայրը» «Դերբենդի նուաճումը» գլխում, վկայակոչելով Սայֆ իբն Ռամադին, այլեւ չի պնդում թէ նա գործ ունի Ֆառուխան անունով հռչակաւոր զօրավարի մակդիրի հետ՝ այնպէս, ինչպէս Իրանի նախախլամական պատմութիւնը շարադրելիս էր: Երկրորդ կարեւոր մանրութը վերաբերում է այն Շահրբարազի (Շահր-Վարազի) կենսագրութեանը, ով 643ի ամռանը³², երբ Ադրբեջանից (Ատրպատականից) ալ-Բաբ (Դերբենդ) հասաւ Վրդ առ-Ռահման իբն Ռաբի՛այի առաջապահ զօրքը, կառավարիչ էր այնտեղ:

Վրդ առ-Ռահման իբն Ռաբի՛ան դուրս եկաւ ալ-Բաբի արքային ընդառաջ, իսկ այնտեղի արքան այդ օրերին Շահրբարազն էր՝ մի մարդ Ֆարսի բնակիչներից (أهل فارس [ahl Fārs]), ով ղեկավարում էր տուեալ լեռնային երկիրը³³: Իր ծագումը նա վերագրում էր Շահրբարազի տան՝ մի թագաւորի, ով ցիրուցան արեց իսրայէլացիներին (بنو إسرائيل [banī 'Isrā'īl]³⁴), վտարելով դրանց Ասորիքից ու Պաղեստինից (الشَّام [aš-Šām]³⁵)³⁶:

Սոյն դրուագի երկրորդ նախադասութիւնում Քուֆայից արաբ պատմիչը, հաանական է, նկատի ունէր պարսիկ զօրավար Շահր-Վարազի (ով յետագայում գահին ապօրինի տիրացաւ) վերը նկարագրուած գործողութիւնները «քսանհինգամեայ պատերազմի» ընթացքում, երբ նա զբաղուած էր Ասորիքում ու Պաղեստինում բիւզանդական նահանգների նուաճմամբ: Յամէնայն դէպս՝ Սեբէոսի մօտ «Խոռեւամի, որ է Ըռազմիոզան», կողմից Երուսաղէմը գերելուց յետոյ, «...հրաման հասեալ ի թագաւորէն

³¹ Борис Рыбаков, “Предпосылки Образования Древнерусского Государства” (Հին ռուսական պետութեան կազմաւորման նախադրեալները), *Очерки Истории СССР: Кризис Рабовладельческой Системы и Зарождение Феодализма на Территории СССР (III-IX вв.)* (Դրուագներ ԽՍՀՄ պատմութիւնից. Ասորկատիրական համակարգի ճգնաժամը եւ աւատատիրութեան ծագումը ԽՍՀՄ տարածքում (Գ.-Թ. դարեր)), ՍՍՀՄ ԳԱ, Մոսկուա, 1958, էջ 872:

³² Բանն այն է, որ Կովկասեան Լեռներում ծմեռուայ շրջանում զաւթողական արշաւանք կատարելը բացառուած էր:

³³ Բնագրում՝ الفرج [al-farj] (բառացի՝ «[Լեռն]անցք»):

³⁴ Ուղղական հ. بنو إسرائيل [banū 'Isrā'īl] (բառացի՝ «Իսրայէլի որդիներ»):

³⁵ «Aš-Šām» կամ «Bilād aš-Šām» (բառացի՝ «Երկիր [Մադինայից] դէպի ծախ») տեղանուամբ մահմեդական արաբները նկատի ունէին Բիւզանդիայի նահանգներն Ասորիքում եւ Պաղեստինում:

³⁶ *Annales quos scripsit*, էջ 2663: Շիխսայիդովը երկրորդ բանաբաղուող նախադասութիւնը, «Դերբենդի նուաճումը» թարգմանելիս, բաց է թողել (Шихсаидов, էջ 72):

(Ապրվեզ Խոսրովայ - Ա.Շ.)...զիրեայսն հրամայէ հալածական առնել ի քաղաքէն»³⁷: Համաժամանակեայ ասորի անյայտ հեղինակի «Ժամանակագրութիւն»-ում հայ եպիսկոպոսի խօսքերը հաստատող մի տող կայ. «Երբ Երուսաղէմը նոսահուեց... եւ... երբ լսեց [Շահրբարազ] զօրավարը հրեաների խորամանկութիւնների մասին, նա դաժանօրէն վռնդեց դրանց»³⁸:

Իսկ ինչ վերաբերում է «ալ-Բաբի արքայ Շահրբարազի» մասին բանաքաղուող դրուագի առաջին նախադասութեանը, ապա՝ խօսքը, յստակ, Բիզանդիայից կախեալ աղուանից իշխանութեան հիմնադիր Վարագ-Գրիգորի³⁹ մասին է, ով, սակայն կառավարման ղեկը արդէն յանձնել էր իր որդուն՝ սպարապետ Զեանշէրին, երբ վերջինս հերոսացաւ արաբապարսկական (636/7ի) Կադիսիյայի ճակատամարտում Սասանեանների կողմից կոռելով⁴⁰:

Մեր թեզը հիմնուած է առ այն, որ Վարագ-Գրիգորը, Աջափնեայ Աղուանքից (Արցախից կամ Ուտիքից) Է. դարի հայ պատմիչի վկայութեամբ,

³⁷ «Պատմութիւն Սերէոսի», էջ 512:

³⁸ «Когда Иерусалим был взят... и... когда услышал военачальник (Шахрбараз - А. Ш.) о хитростях иудеев, он жестоко прогнал их» («Анонимная сирийская хроника о времени Сасанидов (Сирийские источники по истории Ирана и Византии)» (Ասորական անանուն ժամանակագրութիւնը Սասանեանների ժամանակաշրջանի մասին), թարգ. Նինա Պիգուլեւսկայա, *Записки Института Востоковедения АН СССР, т. VII, 1939, էջ 71. նաեւ՝ «Non iam vocaberis Rumiazan, sed Šahrbaraz, id est aper silvestris» (Chronicon anonymi auctoris chronicon ad annum Christi 1234 pertinet, էջ 178):*

³⁹ Վարագ-Գրիգորի իշխանութեան իրաւական ձեւակերպումը բիզանդական կայսեր Հերակլի կողմից, մեր ճշգրտմամբ, կարող էր տեղի ունեցած լինել վերջինիս Գարդմանի բերդ - որտեղ գտնուում էր Աղուանից իշխանի նստավայրը - այցի օրօք շահինշահ Արտաշիր Գ.ի (628-29) Բ. տարում, այսինքն՝ 629ին, (Շահինեան, «Ժառանգական իշխանութիւնների...», էջ 40-41):

⁴⁰ Դրա մասին տե՛ս՝ Շահինեան, «Ժառանգական իշխանութիւնների...», էջ 39-42: Զեանշէրին, հաւանական է, հարկաւոր է նոյնացնել Հորմիզդի (هرمز [Hurmuz]) հետ, ով ատ-Տաբարիի մօտ Կադիսիյայի օրերին եղել է «ալ-Բաբի արքաներից մէկը, լինելով թագադրուած» (*Annales quos scripsit*, էջ 2296): Զեանշէրի արքունիքում ծառայող անանունը մանրակրկիտ նկարագրում է իշխանութեան տարբերանշաններ, որոնք տրամադրուեցին նրան Տիգրնում շահինշահ Յազկերտ Գ.ի (632-51) կողմից («Անանուն, 684 թուականի պատմութիւն», *Մատենագիրք, հպր. Ե. (Է. դար)*, Անթիլիաս, Տպ. Մեծի Տանն Կիլիկիոյ Հայոց Կաթողիկոսութեան, Լիբանան, 2005, էջ 811-12): Ռուս արաբագետ Օլէգ Բոլշակովը, վկայակոչելով նոյն սկզբնաղբիւրներին, գտնում է, որ Կադիսիյայում մասնակցեց եւ Զեանշէրը՝ Առանի (Աղուանից) ապագայ թագաւորը, եւ «Բաբ [ալ-Արուաբի] արքաներից մէկը», չառաջարկելով վերջինիս անունը (Олег Большаков, *История Халифата* (Խալիֆայութեան պատմութիւնը), չորս հատորով, ՌԳԱ «Արեւելեան գրականութիւն», Մոսկուա, 1989-2010, *հպր. Բ.*, ծան., էջ 234):

«ըստ սեփականն իւր լինելով յԱրտաշրական»⁴¹: Ըստ Պարթեաստանի Միհրանեան ազնուական տան ծագումնաբանութեան, որը մեզ է ներկայացնում Ժ. դարավերջում *Պարմութին Աղուանից Աշխահի* եռահատոր երկն աւարտած հայ մատենագիր Մովսէս Դասխուրանցին⁴², Վարազ Գրիգորը Վարդի (*պահլ.* 'Wārd) որդին էր⁴³:

Վերջինիս անունով էլ հեղինակաւոր մատենագիրը աւարտում է Աղուանքում (Առանում) պարսիկներից բաղկացած եւ ժառանգաբար իշխող մարզպանների ցանկը՝ ներկայացնելով այն ընթերցողին ե՛ւ Բ. գրքի իր հեղինակած ԺԵ. գլխում («Վասն Միհրական տոհմին լինել ի Սասանեան Խոսրովու ցեղէն եւ լինել նախագահ Աղուանից տանս»), ե՛ւ ամբողջովին իր հեղինակած Գ. գրքի ԻԳ. գլխում («Կրկնաբանութիւն ազգաշար անուանց համառատաբար»): Հենց այս մարզպանութեան սահմաններում էր, որ 629ին Վարազ-Գրիգորը հռչակեց Կոստանդնուպոլսից կախեալ աղուանից իշխանութիւնը⁴⁴:

Մեր օրերի յայտնի աղուանագէտ Ալեքսան Յակոբեանը իր մենագրութիւնում վստահօրէն գրում է թէ Դասխուրանցին յօրինել է այդ ծագումնաբանութիւնը. իրականում Վարազ-Գրիգորը հնագոյն հայ ազնուական տան ներկայացուցիչ էր՝ Ուտիքում գտնուող Գարդմանի տիրակալներից⁴⁵:

⁴¹ «684 թուականի», էջ 809:

⁴² Մինչեւ վերջերս հայագիտութիւնում ընդունուած էր գրել թէ Մովսէս Դասխուրանցին հեղինակել է միայն այս գրական յուշարձանի աւարտական Գ. գիրքը, իսկ առաջին երկու գրքերը Է. դարի երկրորդ կեսերին հեղինակել է ծնունդով Աջափնեայ Աղուանքից ոմն Մովսէս Կաղանկատուացին: Սակայն, ժամանակակից գիտական տեսակետի համաձայն, *Պարմութին Աղուանից Աշխարհի* երկը ամբողջովին է պատկանում Մովսէս Դասխուրանցու գրչին, միայն թէ վերջինս, 2.-Է. դարերի պատմութիւնը շարադրելիս, երեք համառօտ երկերի հետ մէկտեղ բառացիօրէն արտատպել է պատմագրութեան սեռի երեք համառօտ ստեղծագործութիւններ, որոնց հեղինակները նշուած դարերում ապրած իր համերկրացիներից էին: Մեր այս ուսումնասիրութեան հետ առնչուած են դրանցից երկրորդն ու երրորդը: Բանաքաղուած երկերից մէկը այսօր առաջարկում է պայմանականօրէն կոչել «*Վիրոյ կաթողիկոսի պարմութիւն*», եւ վերագրել այն Է. դարի Աջափնեայ Աղուանքի Կաղանկատուոյք գիւղից ոմնի գրչին (Ալեքսան Յակոբեան, «Անանուն Կաղանկատուացին եւ իր երկը», *Մարտենագիրք, հրդ. Դ.*, էջ 371-73): Միւրը՝ առաջարկում է պայմանականօրէն կոչել «684 թուականի» (Ալեքսան Յակոբեան, «Անանուն եւ 684», *Մարտենագիրք, հրդ. Ե.*, էջ 795-98):

⁴³ «Մովսէսի Կաղանկատուացոյ պատմութիւն Աղուանից Աշխարհի», *Մարտենագիրք հայոց, հրդ. ԺԵ. (Ժ. դար)*, Անթիլիաս, Տպ. Մեծի Տանն Կիլիկիոյ Հայոց Կաթողիկոսութեան, Լիբանան, 2012, էջ 224-26:

⁴⁴ Շահինեան, «Ժառանգական իշխանութիւնների...», էջ 39-41:

⁴⁵ Ալեքսան Յակոբեան, *Արքայապոռհմերն ու իշխանապոռհմերը Բուն Աղուանքում եւ Հայոց Արեւելից կողմանքում անտիկից մինչեւ ԺԳ. դար* (Պարմա-աղբիւրագիտական քննութիւն), ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն», Երեւան, 2020 էջ 157-73:

«Գահնամակ»ում, որը թուագրում է 388ով եւ վերագրում է Մեծ Հայքի արքայ Խոսրով Դ. Արշակունուն (387–89) ու եկեղեցապետ Ս. Սահակ Պարթեւին (387–439)⁴⁶, թուարկում են թոտվ Հ. (60) հայ ազնուականներ, եւ ԻԳ. տեղում իրօք Գարդմանի տէրն է նշում⁴⁷: Սակայն է. դարում հայոց իշխանական տների ամբողջական ցանկում - որոնք որ թոտվ ԼԳ. են, մենք դուրս ենք գրել *Պատմութիւն Սեբեոսիից* - Գարդմանի տիրակալների այլեւս չես հանդիպի⁴⁸: Պարզապէս այդ տունը անցած դարերի ընթացքում վերացել էր: Աւելին՝ մենք տեսանք, թէ ինչպէս «684 թուականի պատմութիւն»ի հեղինակը, ով ծառայել է Վարազ-Գրիգորին յաջորդած՝ նրա որդու Ջեանշէրի արքունիքում, պնդում էր առ այն, որ Վարազ-Գրիգորը Արտաշիրի սերնդից էր այնպէս, ինչպէս եւ հանգուցեալ զօրավարը՝ շահինշահի գահին 630ին ապօրինի տիրացած Շահր-Վարազը: Հետեւաբար, Վարազ-Գրիգորը հաստատ ունէր իրանական ծագում եւ նրա առնչութիւնը Միհրանեան ազնուական տան հետ միանգամայն իրական է:

Ահա թէ ինչու է «Պատմութիւն մարգարէից եւ թագաւորաց»ում «ալ-Բաքի արքայ Շահրբարազը» յիշատակուած իբրեւ «Ֆարսի բնակիչներից» կամ էլ՝ «պարսիկ»՝ ինչպէս որ կարելի է արաբերէնից թարգմանել *'ahl Fārs* իդաֆան (*status constructus*): Եւ պատահական չէ, որ այս «ալ-Բաքի արքան» արաբ հրամանատար 'Աբդ առ-Ռահման իբն Ռաքի'այի հետ, ով ներխուժել էր իր երկիր, խաղաղ բանակցութիւնների ընթացքում հպարտօրէն յայտարարում էր.

Իրականում առջեւումս [մի կողմից] դաժան թշնամին է՝ [խազիրը], իսկ [միւս] տարբեր ժողովուրդներ անյայտ ծագումով⁴⁹: Հարկ չէ նրան, ով ազնուական է եւ ողջամիտ, օժանդակութեան ձեռք մեկնել սրանց պէս [մարդկանց], կամ էլ դրանց օգնութեան կանչել ազնուական ու ազդեցիկ մարդկանց դէմ [պատերազմում]: Չէ որ ազնուականը մօտ է ազնուականին, անկախ նրա

⁴⁶ Սոյն վաւերական ցուցակում (հրովարտակում) կարգաւորուած են Արշակունեաց արքունիքում նախարարական կամ իշխանական տների զբաղեցրած տեղերը, գահերը կամ պատուաստիճանները:

⁴⁷ Николай Адонц, *Армения в эпоху Юстиниана. Политическое Состояние на Основе Нахарапского Строя* (Հայաստանը Յուստինիանոսի օրօք, քաղաքական վիճակը նախարարական համակարգի հիման վրայ), Հայ-վրացական բանասիրութեան աշխատութիւններ, Գիրք ԺԱ., Տպ. Կայսերական ԳԱ, Սանկտ Պետերբուրգ, 1908, էջ 249–52. նաեւ՝ Բաբկէն Յարութիւնեան, ««Գահնամակի» թուագրման հարցի շուրջը», *Պատմաբանասիրական հանդէս*, 1976:2, էջ 57–74:

⁴⁸ Арсен Шагинян, *Раннесредневековая География Армении и Стран Южного Кавказа* (Հայաստանի եւ Հարաւային Կովկասի երկրների վաղ միջնադարեան աշխարհագրութիւնը), Սանկտ Պետերբուրգ, «Դմիտրիյ Բուլանին», 2014, էջ 148:

⁴⁹ Նկատենք, որ Բալ'ամի պարսկերէն բնագրում «*տարբեր ժողովուրդներ անյայտ ծագումով*» արտայայտութեան փոխարէն առկայ է յստակ ժամանակավրէպութիւն. այնտեղ գրուած է «ոուսք» (*Chronique de Abou-Djafar-Mohammed-ben-Djarir-ben-Jazid Tabari*, էջ 194):

գտնուելու վայրից: Իդէա՝ ո՛չ-կովկասցու (القُبَج [al-qabǧ]), [այսինքն՝ աղուանցու, արին կայ] իմ մէջ, ո՛չ էլ՝ հայի⁵⁰:

«Վարազ-Գրիգոր» անձնանունը բաղկացած է երկու յատուկ անուններից՝ իրանա-գրադաշտական «Վարազ»ից (*varāz*. Warāz - բառացի՝ «վարազ կենդանի»), որը առկա է առ-Տաբարիի մօտ յիշատակուած անձնանունում, եւ քրիստոնէական՝ «Գրիգոր»ից⁵¹: (Երկրորդ անունը, յունականը⁵², ակնյայտօրէն, իրաքցի հեղինակին, ով «մահմեդական պատմահոր»ը հաղորդել էր մեզ հետաքրքրող դրուագը, դժուար ընկալելի է թուացել եւ անփոխանցելի:) Աղուանից իշխանութեան հիմնադրի մօտ այնպիսի քրիստոնէական անուան առկայութիւնը, որը յայտնի է միայն վաղ քրիստոնէական դարաշրջանից, կարելի է բացատրել յուսալի մի փաստով. ըստ Դափստրանցու, Վարազ-Գրիգորը Աղուանից կաթողիկոս Վիրոյի (595–629) ձեռամբ մկրտուել էր⁵³ եւ, ինչպէս հետեւում է շարադրութիւնից, եկեղեցապետի մահուան նախօրէին: Վրաց մատենագիր Սումբաթ Դաւիթիս-ձէն (ԺԱ. դ.) պնդում է, թէ Վարազ-Գագելին (Վարազ-Գրիգորը) մկրտուել է իր նստավայր Գարդաբանի (Գարդման) ժամանաձ կայսեր Էրակլի (Հերակլի) ձեռամբ⁵⁴:

Խօսքը, ակնյայտորեն վերաբերում է այն բանին, որ կայսրը Ադուանից առաջին իշխանին կնքահայր էր կանգնել, այլ ոչ թե «Վարագ-Գրիգորն երկրորդ անգամ մկրտության ստացաւ», ինչպէս որ ժամանակին մտորում էր Բունիաթովը⁵⁵: Վրաց մատենագրի գրառումը Արտամոնովը մեկնաբա-

⁵⁰ *Annales quos scripsit*, 12 2664:

⁵¹ Ըստ Դասխուրանցու, Վարագ-Գրիգորի երկու որդիները նոյնպես կրում էին կրկնակի անուններ՝ Վարագ-Պերոժ եւ Վարագման («Մովսէսի Կաղանկատուացոյ պատմութիւն Աղուանից Աշխարհի», էջ 226), իսկ «684 թուականի»ում Ջեանշերին յաջորդեց նրա եղբոր Վարագ-Պերոժի որդին՝ Վարագ-Տրդատը («684 թուականի», էջ 861-62):

⁵² Հին յունարէն գրողորէւ (բառացի՝ «արթուն մնալ»):

⁵³ «Մովսէսի Կաղանկատուացոյ պատմութիւն Աղուանից Աշխարհի», էջ 226:

54 «Սումբաթ Դալիթս-ձէ, պատմութիւն եւ տեղեկանք Բագրատունիների» (Նշմաճ Դաւիտիս Ժ, Եւրօքը Դա Միլլը Բադրատունիս), *Քարթլի Յիսթորիքա*, 1-2, Հրատ. Ս. Կառլիսիսի, Պետիրատ, Թիլիսի, 1955-59, *Հոր. Ա.*, էջ 375: ԺԱ. դարի վրայ միւս մատենագիրները հաստատուն են, որ կայսրը երկար ժամանակ իջեանել է Վարագ-Գրիգորի (Վարագ-Գրիգորի) նստակայր Գորդա-բանիւն («Մոքցեայ Քարթլիսայ» (մոլլեւի յարտոլիս), *Քարթլի Յիսթորիքա*, 1-2, *հոր. Ա.*, էջ 72-138. նաեւ՝ «ձկանշերի, Վախթանգ Գորդասայի» (Ջաւնշեր, Եւրօքը Դա Եւրթալիս), *Քարթլի Յիսթորիքա*, 1-2, *Հոր. Ա.*, էջ 225):

⁵⁵ Буниятов, 52 49:

նում էր, որպես Վարազ-Գրիգորի կողմից, ով նախկինում մկրտուած էր, (բիզանդական) ուղղափառության ընդունում⁵⁶:

Ամէն դէպքում Աղուանից առաջին իշխանի կողմից մկրտութեան խորհուրդի ընդունումը հաւասարազօր էր նախկին գրադաշտական, պարթեական Միհրանեաններից սերուած աղուանից իշխանական ճիւղում քրիստոնէութեան հռչակմանը որպէս իշխող հարստութեան կրօն⁵⁷: Հետաքրքիր է, որ Դաւիթիս-ձէն շարադրում է դրա մասին Թբիլիսիում եւ Կովկասի միւս քաղաքներում բոլոր մոզերի եւ կրակապաշտների հարկադիր մկրտութեան մասին կայսեր Էրակլի հրահանգի ենթահողում⁵⁸: Սա անուղակիօրէն հաստատում է պանիրանեան գրադաշտական հաւատքի առկայութիւնը աղուանից իշխանութեան հիմնադրի մօտ ի ծնէ: Աւելին, Դասխուրանցին թուարկելով Առանի պարսիկ մարզպաններին՝ Վարազ-Գրիգորի նախորդողներին, միայն մէկի դէպքում է (քաջ Վարդանի), երբ գրառում է կատարում առ այն, «որ հաւատացեալ ի Քրիստոս»⁵⁹: Այսինքն՝ մնացած բոլորը մինչեւ Վարդը՝ աղուանից իշխանութեան հիմնադրի հօր, մնում էին գրադաշտական հաւատքի մէջ:

Մեր կողմից առաջ քաշուած այն թեզը, թէ ատ-Տաբարիի մօտ գրարուած «ալ-Բաբի արքայ Շահրբարազին» հարկաւոր է նոյնացնել Վարազ-Գրիգորի հետ, հաստատում է նրան յաջորդողի՝ Ջեւանշէրի արքունիքում ծառայողի՝ «684 թուականի»ի հեղինակի անուղղակի վկայութեամբ առ այն, որ աղուանից իշխանութեան հիմնադիրը հագարացիների (արաբների) հետ բանակցել է: Անանուն մատենագիրը պնդում է, որ իր տէր Ջեւանշէրը հօր հետ միասին հագարացիների (արաբների) ճնշման հետեւանքով եւ եօթ տարի նրանց դէմ պատերազմելուց յետոյ⁶⁰ ստիպուած էր (քաղաքամայր) Պերոզ Կաասից (Պարտաւից) (Կուր) գետի միւս (ձախ) ափին անցնել, որտեղ որ Դերբենդն էր գտնուում, «*ուստի անվշտերն իւր սիրտ վառէր, բորբոքէր վերստին առնել առ նոսա պատերազմ, զի զիւր զհայրն ի նոցանէ եւս թափեցէ: Եւ հայր նորա արգելոյր զնա ի խորհրդոյն եւ զնայր կամաւորաբար ի թշնամիսն*»⁶¹:

⁵⁶ Михаил Артамонов, *Очерки Древнейшей Истории Хазар* (Դրուագներ խազարների հնագոյն պատմութիւնից), Սոցէկգիզ, Լենինգրադ, 1936, էջ 60:

⁵⁷ Տարբերութիւնն այն է որ Աղուանից Եկեղեցին, գտնուելով հայոց կաթողիկոսների իրաւասութեան տակ, ժխտում էր «Քաղկեդոնի հաւատոյ հանգանակն» (Արսէն Շահինեան, «Ե.-Է. դարերի պարսկահպատակ հայոց հայրապետերի իրաւասութեան եւ հովանու ներքոյ գտնուող տարածքները», *Հայկազեան հայագիտական հանդէս, հոյր. ԼԸ.*, 2018, էջ 93-116):

⁵⁸ «Սումբաթ Դաւիթիս-ձէ, պատմութիւն եւ տեղեկանք Բագրատունիների», էջ 375:

⁵⁹ «Մովսէսի Կաղանկատուացոյ պատմութիւն Աղուանից Աշխարհի», էջ 417:

⁶⁰ «684 թուականի», էջ 813:

⁶¹ Նոյն, էջ 817:

Ինչպես հետեւում է ատ-Տաբարիի մէկ այլ սկզբնաղբիւրի հեղինակի՝ աս-Սարի իբն Եահիայի, տուեալներից, զօրքերն ալ-Բաբից (Դերբենդից), պէտք է հասկանալ Առանից, սասանեան իշխանութիւնների կողմից զօրակոչուել էին՝ պատերազմելու մահմեդականների դէմ դեռ Հիջրայի 14ին⁶² (635ի Փետրուարի 25ից մինչեւ 636ի Փետրուարի 13ը): Դրա համար է, որ հայ ժամանակակիցը հաստատում է, որ Զեւանշէրը մասնակցութիւն է ունեցել հազարացիների (արաբների) դէմ կռիւներում, երբ նա Ռոստամի հետ միասին (Կադիսիյայի) ճակատամարտի նախօրէին հատեց Դկղաթը (Տիգրիսը)⁶³: Այսպիսով, Զեւանշէրի մահմեդականների դէմ տարած «եթթամեայ պատերազմը» սկսուեց 636ին, իսկ դրա ամառը համընկնում է նրա հօր՝ Վարազ-Գրիգորի կողմից արաբների հետ 643ին կնքուած համաձայնագրի նախօրէի հետ:

Աջափնեայ Աղուանքից անանուն հայ հեղինակը Վարազ-Գրիգորի թշնամու ճամբար ներկայանալով յանկարծակի ընդհատում է իր շարադրանքը նրա մասին: Ակնյայտօրէն, մատենագիրը չէր ցանկանում հանրայնացնել աղուանից իշխանի կողմից խալիֆայութեան հպատակութեան ընդունման փաստը: Մինչդեռ արաբ պատմիչ Սայֆ իբն Ռումառը շարունակում է գրել Շահրբարազի (Շահր-Վարազի, նոյնինքն Վարազ-Գրիգորի) խաղաղութեան առաջարկների մասին. «Իրականում դուք, [արաբներդ], յաղթել էք իմ երկիր [ալ-Բաբին] ու իմ ազգին: Դրա համար էլ այսուհետեւ ես ձեզանից մէկն եմ... Զիզիան, [որը մենք վճարելու ենք], թող օգնի ձեզ իրականացնելու այն ամէնը, ինչ դուք էք կամենում: Միայն թէ մի՛ նուաստացրէք մեզ [պարտադրելով մեծաշաւի] փոքրքեր, որոնք կը թուլացնեն մեզ ձեր իսկ թշնամիների՝ [խազարների] առջեւ»⁶⁴: Սուրակա իբն Ամրի պատասխանից հետեւում է, որ Շահր-Վարազը ներկայացաւ նրա ճամբար գորախմբով, որը պատրաստ էր համալրել իսլամի բանակը: «Ընդունում եմ ես,- ասում է արաբ փոխարքան,- քո այդ [պայմանը] նրանց վերաբերեալ, ովքեր որ քեզ հետ են եկել, եւ մինչ այն պահը, երբ նրանք պարտասու կը լինեն [ծառայելու մեզ]: Սակայն չեն ազատում հարկերից նրանք, ովքեր որ մնացին [որդուդ հետ միասին ալ-Բաբում], չշարժուելով իրենց [տեղից]»⁶⁵:

Խոշոր նուաճումների եւ հաւատուրացների մասին գիրք»ի արաբ հեղինակը պնդում էր նաեւ, որ «[ալ-Բաբի] այդ երկրում՝ շրջապատուած [Կովկասեան] անձայրածիր լեռներով, չկար որեւէ բարձունք, որի վրայ հայեր կանգնած չլինէին՝ պատրաստ մեկնելու [կռուի]: Դրանք ինչպէս մօտակայքի բնակիչներ էին, այնպէս էլ՝ հեռուից եկածներ, որոնք կտրուել էին իրենց բարձունքներից՝ [Հիւսիսային Կովկասի] տափաստանային մարդկանց ասպատակութիւնների

⁶² *Annales quos scripsit*, էջ 2651:

⁶³ «684 թուականի», էջ 810:

⁶⁴ *Annales quos scripsit*, էջ 2664:

⁶⁵ *Ibid*:

հետեանքով: Թաքնում էին լեռնականները այդ [տափաստանային բնակիչ-ներից] սեփական լեռներում մինչդեռ վերջիններս լքում էին իրենց ցածրադիր գոտիները: Արդիւնքում, կանգնած էին մնացել այն [բարձունքներին] միայն [հայ] զինուորներն ու նրանք, ովքեր աջակցում էին սրանց եւ առետուր անում սրանց հետ⁶⁶:

Ընդ որում՝ Շահիր-Վարազը պնդում էր, որ ‘Աբդ առ-Ռահման իբն Ռաբի’ան չներխուժի Խազիդք Դերբենդի կողմից. «*Մենք կը բաւարարուենք նոյնիսկ այն պարագայում,- ասում էր նա արաբ փոխարքային,- եթէ նրանք [խազարները] մեզ [հանգիստ] թողնեն ալ-Բաբից այս կողմ*»⁶⁷: Ակնյայտօրէն, աղուանից իշխանը վախենում էր խազարների հաւանական պատժիչ արշաւանքից: Նա պէտք է լաւ յիշէր թէ ինչպէս 628ի Փետրուարի 29ին Խոսրով Փարվիզի մահապատժից յետոյ, «Վիրոյ կաթողիկոսի պատմութիւն»ի վկայութեամբ, խազարները լայնածաւալ ներխուժեցին Աղուանք⁶⁸: Եւ միայն շահինշահ Արտաշիր Գ.ի (628–29) Բ. տարում նրանք պարտադրուած էին վերադառնալ Խազիդք⁶⁹: Այնուամէնայնիւ, ‘Աբդ առ-Ռահմանը անտեսեց Շահիր-Վարազի խնդրանք-պահանջը. ալ-Բաբի (Դերբենդի) կառավարչի պաշտօնում նա յաճախակի ներխուժում էր Խազիդք՝ ‘Ումառի եւ նրան յաջորդող ‘Ումմանի օրօք, մինչեւ որ ընկաւ թշնամու զէնքից Հիջրայի 32ին (652/3): Սրա մասին հաստատում էր հենց իր հարազատ Սալման իբն Ռաբի’ա եղբայրը⁷⁰:

Առանց Կովկասի քրիստոնէայ զինուորների աջակցութեան ‘Աբդ առ-Ռահման իբն Ռաբի’ան չէր կարող արշաւել հեթանոսների դէմ տաս տարի շարունակ: Հետեւաբար, 643ի համաձայնագրի պայմանները՝ իսլամի վարած պատերազմներում տեղի բնակչութեան մասնակցութեան վերաբերեալ, լիովին իրագործում էին:

‘Աբդ առ-Ռահման իբն Ռաբի’այի հետ Շահիր-Վարազի վարած բանակցութիւնների եւ վերջինիս կողմից արաբական հպատակութեան ընդունման մասին է վկայում նաեւ պարսիկների դէմ 642ի Նեհաւենդի ճակատամարտում հերոսացած մահմեդական ‘Ամր իբն Մա’դ Եակրիբը՝ ‘Աբդ առ-Ռահմանի եղբոր՝ Սալման իբն Ռաբի’այի հետ զրոյցում:

Մի անգամ ես ալ-Բաբում ներս մտայ ‘Աբդ առ-Ռահման իբն Ռաբի’այի մօտ, երբ այնտեղ էր նաեւ Շահրբարազը <...> Շահրբարազը, դիպչելով սուտակին, [որը հասցրել էր իր սուրհանդակը Դերբենդի պատի մօտակայքից]... բացականչեց. “Սա աւելի գեղեցիկ է, քան [ողջ] այս երկիրը, նկատի ունենալով ալ-

⁶⁶ Ibid, էջ 2665: Սոյն դրուագը Ամիրի Շիխսայիդովան թարգմանելիս բաց է թողել (Шихсаидов, էջ 72–74):

⁶⁷ *Annales quos scripsit*, էջ 2667:

⁶⁸ «Անանուն Կաղանկատուացի, Վիրոյ կաթողիկոսի պատմութիւն», էջ 398–401:

⁶⁹ Նոյն, էջ 410–14:

⁷⁰ *Annales quos scripsit*, էջ 2668–69, 2889–90:

Բարը: Երդուն՝ եմ Աստուծով: Կամենում եմ, որ արքայական իշխանության գլխին դուք լինեք, այլ ոչ թե Քիսրայի [Խոսրովի] ժառանգները: Եթե ես շարունակեի մնալ վերջիններիս իշխանության ներքոյ, եւ այսպիսի [սուտակի] մասին լուրը հասնէր դրանց, ապա ձեռքիցս կը խլէին իրենք: Երդուն՝ եմ Աստուծով, ոչինչ կանգնած չի լինի ձեր [ճանապարհին], եթէ հաւատարիմ էք եւ դուք [ձեր խոստումներին], եւ՛ ձեր մեծ արքան՝ [սալիֆը]»⁷¹:

Հիջրայի նոյն 22ով, երբ «Պատմութիւն մարգարէից եւ թագաւորաց»-ում շարադրուած էր «Դերբենդի նուաճումը» գլուխը եւ ողջ Արմինիայի բնակիչների հպատակեցման մասին, հայոց վարդապետ Ղետնդը, ով աւարտում է շարադրութիւնը խալիֆ Հարուն առ-Ռաշիդի (786ի) թագադրմամբ, մանրամասնօրէն նկարագրում է իսմայէլի (արաբների) զօրքերի ներխուժումը «յաշխարհս Հայոց ընդ կողմն Պարսից»: Ընդ որում՝ նրանք Երասխ (Արաքս) գետը անցան Զուղայի շրջանում Ատրպատականի կողմից: Այնուհետեւ վարդապետ-պատմիչը խօսում է իսմայէլի փոքրաթիւ զօրախմբի (10 հազ. պակաս) տարած յաղթանակի մասին՝ յոյների (եւ հայերի) Պոռկոպի եւ Թէոդորոս (Ռշտունու) գլխավորութեամբ 60-հազարանոց բանակի նկատմամբ Վասպուրական աշխարհի Մարդուցայքի (Մարդաստանի) ճակատամարտում⁷²:

Դէպքերի ժամանակակից Սեբէոսի մօտ կայ մի գրառում, որը անուղղակիօրէն հաստատում է ինչպէս Ղետնդի, այնպէս էլ վերջինիս մահմեդական ժամանակակցի՝ Սայֆ իբն Ռամադի հաղորդագրութիւնը. «Եւ ամբաստանութիւն ամէնայն զարացն Հռոմին եւ Կորսունք զԲշարունեաց Կեանքն լինէին եւ զՀայոց՝ առաջի թագաւորին իրեանց վասն հարուածոց՝ որ եղեն ի Մարդոցէսն: Զի [հայերն] ասացին, թէ “Միաբանեցան ընդ Իսմայէացիսն. զմեզ վստահացուցին եւ զգաւսն ճապաղել ետրուն յասպարակ յԱտրպատական, եւ զնոսա ածին ի վերայ մեր յանկարծակի, եւ հարկանել ետրուն զմեզ. եւ մեր ամէնայն ինչ անդ անկաւ... »»⁷³:

Հաւանական է, մահմեդականների այս վճռական յաղթանակը հայ-յունական վեցապատիկ գերազանցող զօրքի նկատմամբ թոյլ տուեց արաբ փոխարքայ Սուրակա իբն Ամրին, ով ղեկավարում էր Ադրբեջանից (Ատրպատականից) ալ-Բաբ (Դերբենդ), աւելի ճիշտ Աղուանք, ներխուժած ուժերը⁷⁴, հասցէագրել խաղաղութեան թուղթը ո՛չ միայն տեղացիներին, այ-

⁷¹ Ibid, էջ 2669, 2671:

⁷² «Պատմութիւն Ղետնդեայ մեծի վարդապետի հայոց...», *Մատենագիրք հայոց, հրդ. Զ. (Ը. դար)*, Անթիլիաս, Տպ. Մեծի Տանն Կիլիկիոյ Հայոց Կաթողիկոսութեան, Լիբանան, 2007, էջ 738–39: Թէոփանէս Խոստովանողը յիշատակում է Պոռկոպին Կոնստանդ արքայի հրամանով 642(+7/8=649/50)ին Մ(ու՛)ալի(յ)այի հետ զինադադարի կնքման ծիրում (*Theophanis Chronographia*, էջ 526–27):

⁷³ «Պատմութիւն Սեբէոսի», էջ 554:

⁷⁴ *Annales quos scripsit*, էջ 2663–65:

լել՝ ողջ Արմինիայի բնակչութեանը: Վերջինս, յիշեցնենք, արաբ զաւթիչների պատկերացումով, միատրում էր Բիզանդիայից կախեալ երեք քրիստոնեայ իշխանութիւնները՝ Հայքն, Աղուանքն ու Վիրքը:

Հարկատու է խոստովանել, սակայն, որ աղբիւրներում անհնար է գտնել ուղիղ ապացոյցներ առ այն, որ Շահր-Վարազը *de jure* կամ *de facto* լիազօրուած էր 'Աբդ առ-Ռահման իբն Ռաբի'այի հետ բանակցութիւնների ժամանակ ներկայացնել երեք իշխանութիւնների բնակիչներին, կամ որ Սուրակա իբն 'Ամրը հիմքեր ունէր հասցէագրել վերոյիշեալ թուղթը բոլոր իշխանութիւնների բնակիչներին: Նոյնիսկ այս երկու «Լուսաւորների» (Dū an-Nūr) անունները անհնար է գտնել «Իսլամական Ոսկեդար»ի միա մատենագիրների մօտ, բացառութեամբ երեւի ատ-Տաբարիի Հիջրայի 22ի (642/3ի) տակ նկարագրուած պատմուածքների Իբն ալ-Ասիրի բանաքաղուած շարադրութեամբ⁷⁵: Փոխարէնը հայ մատենագրքերից մէկում՝ եպիսկոպոս Յովհան Մամիկոնեանին վերագրուող *Պատմութիւն Տարօնոյ*ում, որում շարադրութիւնը աւարտում է հայոց ՃԼ թուականով (681/2), թում է թէ մենք գտանք 'Աբդ առ-Ռահմանին, որը արշաանքներ էր կատարել դէպի Հայք ու Վիրք, հարկելով տեղի բնակիչներին:

Եւ այսպէս, հայ ժամանակակիցը պնդում էր, թէ Ը. տարի անց կայսեր Հերակլի (631ին «Դարձ տէրունեան խաչին յերուսաղէմ») Կոստանդնուպոլիս վերադառնալուց յետոյ, Հայք ներխուժեց Մահմէդ (Մուհամմադ) մարգարէի «քեռորդին» Աբդուհիմը ('Աբդ առ-Ռահիմը) տասնութ հազար զօրքով: Դիմադրութիւն նրան փորձեց ցոյց տալ Տարօնի իշխան Տիրան Մամիկոնեանի ութ հազարանոց ջոկատը, իսկ թշնամու կողմն անցաւ Սահուռ Անձեացին⁷⁶: Իդէպ՝ ալ-Բալաճուրին հաստատում է, որ Հիջրայի 20ի ալ-Մուհառամ ամսին (640ի Դեկտեմբերի 21ից մինչեւ 641ի Յունուարի 19ը) Անձեացիքի ոմն պատրիկ (batrīq az-Zawazān) հպատակուեց արաբներին եւ հարկուեց⁷⁷: Իվերջոյ, հաաքագրելով հարկերը Հայքից ու Վիրքից, Աբդուհիմը, ինչպէս որ աւարտում է շարադրութիւնը *Պատմութիւն Տարօնոյ*ում, վերադարձաւ Տաճկաստան (Արաբիա)⁷⁸:

Մենք լիովին ընդունում ենք *Պատմութիւն Տարօնոյ*ի արաբական Աբդուհիմ անձնանունի նոյնացումը «Պատմութիւն մարգարէից եւ թագաւորաց»ի 'Աբդ առ-Ռահմանի հետ: Բանն այն է, որ «'Abd ar-Rahīm» (عبد الرحيم) թարգմանաբար նշանակում է «Ողորմածի ստրուկը», «'Abd ar-Rahmān» (عبد الرحمن) էլ՝ չնայած բազմաթիւ նշանակութիւններ ունի⁷⁹, բայց բոլորն էլ

⁷⁵ Ibn al-Athir, *al-Kamil fi-l-Tarikh*, vol. 1, էջ 14-15:

⁷⁶ «Յովհան Մամիկոնեան, պատմութիւն Տարօնոյ», *Մատենագիրք*, Ե., էջ 1123:

⁷⁷ *Liber expugnationis regionum auctore Imamo Ahmed ibn Jahja ibn Djabir al-Beladsori*, էջ 176:

⁷⁸ «Յովհան Մամիկոնեան, պատմութիւն Տարօնոյ», էջ 1124:

⁷⁹ Թարգմանաբար՝ «Ողորմածի, Ամենաողորմողի, Գթասրտի կամ Մեծահոգու ստրուկ»:

ինչ-որ կերպ կապուած են «ողորմութեան» հետ: Մահմեդական հեղինակատոր ղուրանագէտ եւ հադիսագէտ Իբն Քասիրը (մահ. 1373) «Ղուրանի մեկնաբանութիւնը»-ում (تفسير القرآن العظيم [Tafsīr al-Qurʾān al-ʿAzīm]), վկայակոչելով հենց Մուհամմադ մարգարէին, «Ալլահի 99 անուններից» այս երկուսի («ar-Rahmān» եւ «ar-Rahīm»)⁸⁰ ստուգաբանութիւնը կապում է միեւնոյն «ar-Rahmān» որոշեալ յօդով արաբերէն բառի հետ⁸¹, որը ծագում է رحم [rahima] (բառացի՝ «խղճալ, ներել») բայից:

Այսպիսով՝ Սուրակա իբն Վմրը կարող էր Վբդ առ-Ռահման իբն Ռաբի՛այի գլխաւորութեամբ իր առաջապահ զօրքերի արշաւանքները եւ Հայքից ու Վիրքից հարկերի հաւաքագրումը դիտարկել սրանց նկատմամբ գերագոյն իշխանութեան ձեռքբերում, հետեւաբար, հաշտութեան թուղթը յղել այդ թում իրենց բնակիչներին: Իսկ Հայքում տեղադրուած հայկական ու քիւզանդական ուժերը չհաշտուեցին 643ին կնքուած համաձայնագրի հետ: Յամէնայն դէպս, Սելեւկեան 955ին (643/4ին), այսինքն՝ Մարդաստանում կրած խայտառակ պարտութիւնից մէկ տարի անց, Յակոբիկեան Եկեղեցու պատրիարք Դիոնիսիոս Ա. Թէլ-Մահարցուն (817–45) վերագրող «Ժամանակագրութիւն»-ում այսպիսի մի գրառում կայ. «Սոյն տարում Պոռկոպն ու Թէոդորը անյերածգելի արշաւանք կատարեցին դէպի Բաւրնա-Սարուգ քաղաքը: Նրանք աւերեցին ու կողոպտեցին [ալ-Ջազիրայում գտնուող] այս քաղաքը եւ, բռնագրաւելով այն ամէնը, ինչ ուզում էին, վերադարձան իրենց երկիր»⁸²:

Ատ-Տաբարին «Դերբենդի նուաճումը» գլխի եզրափակիչ հատուածում, դարձեալ վկայակոչելով Սայֆ իբն Ռումառին եւ ներկայացնելով յղումների ամբողջական մի շղթայ (*արաբ.* 'إسناد [ʾisnād]), գրում է, թէ ինչպէս «Արմինիայի բնակիչները նորից դարձան գաւուրներ Մու՛ափյա [իբն Աբու Սուֆիանի փոխարքայութեան] օրօք»⁸³: Ըստ մահմեդական աղբիւրների՝ ողջ աշ-Շամի եւ ալ-Ջազիրայի միատրումը այս փոխարքայի իշխանութեան ներքոյ տեղի է ունեցել խալիֆ Ռումանի կառավարման առաջին երկու

⁸⁰ Ղուրանի բոլոր սուրանները, բացառութեամբ Թ.ի, սկսում են այս սուրբ արտայայտութեամբ, որում երկու անուններն էլ կան:

⁸¹ *Miṣbāḥ al-munir fī taḥḍīb tafsīr ʾIbn Kaṭīr* (مصباح المنير في تهذيب تفسير ابن كثير), ed. by Ṣaʿfī al-Raḥmān al-Mubārakfūrī, 2nd ed., Riyadh, Darussalam, 2003, vol. 1, էջ 66: Երկու անունների միջեւ տարբերութիւնը այն է, որ դրանից առաջինը «ներառում է Ալլահի կարեկցանքի բոլոր տեսակները», մինչդեռ երկրորդը՝ «նշանակում է գործողութիւն հաւատացեալների նկատմամբ» (Ibid., էջ 67):

⁸² «Procope et Théodore firent une excursion impétueuse jusqu'à Batna-Saroug. Ils dévastèrent et pillèrent cette ville et, s'étant emparés de tout ce qu'ils voulurent, ils retournèrent dans leur pays» (*Chronique de Denys de Tell-Mahré*, publié et trad. par J. Chabot, Paris, É. Bouillon, 1895, էջ 7):

⁸³ *Annales quos scripsit*, էջ 2674:

տարիների ընթացքում⁸⁴, այսինքն՝ 644ի Նոյեմբերից մինչև 646ի Նոյեմբեր:

Արդիւնքում Մու'աւիյան սկզբում ստիպուած եղաւ Դամասկոս կանչել բիզանդացի զօրավար Պոռկոպին եւ 649/50ին կնքել նրա հետ երեք տարի ժամկետով զինադադար ասորական ճակատում, ինչի մասին են վկայում բազմալեզու քրիստոնեայ մատենագիրները⁸⁵: Ժամկետը լրանալուն պէս նոյն այս փոխարքան Դամասկոս կանչեց արդէն իր նահանգներին յարակից հայոց իշխանութեան կառավարչին՝ Թէոդորոս Ռշտունուն՝ կնքելով նրա հետ 652ի Օգոստոսին հայ-արաբական ռազմաքաղաքական դաշինքը: Իդէպ՝ Սուրակա իբն 'Ամրը, ում հետ Շահր-Վարազը 643ին համաձայնութեան էր եկել, վաղուց արդէն մահացել էր՝ դեռ խալիֆ 'Ումայի կեանքի օրօք⁸⁶, այսինքն՝ 644ին:

Եւ այսպէս, մահմեդական արաբ զաւթիչները Հիջրայի 22ին (642/3), աւելի որոշակի՝ 643ի ամռանը, Ադրբեջանի (Ատրպատականի) կողմից ներխուժեցին Բիզանդիայից կախեալ հայոց, վրաց եւ աղուանից իշխանութիւնների տարածքները, հասնելով մինչև Դերբենդ: Ռազմական արշաւի գլխին կանգնած էին 'Աբդ առ-Ռահման իբն Ռաբի'ան, սրա եղբայր Սալմանը եւ Բուկայր իբն 'Աբդ Ալլահը՝ փոխարքայ Սուրակա իբն 'Ամրի ընդհանուր հրամանատարութեան ներքոյ: Հայքի տարածքում մահմեդականները յաղթանակ տարան վեց անգամ գերազանցող հայ-յունական ուժերի նկատմամբ Մարդաստանի ճակատամարտում, իսկ աղուանից իշխանութեան հիմնադիր Վարագ-Գրիգորը, նոյնինքն ատ-Տաբարիի մօտի Շահր-բարազը (Շահր-Վարազը), շտապեց 'Աբդ առ-Ռահմանի ճամբար, ով զօրավարներից առաջինն էր ասպատակել Դերբենդի շրջակայքը, եւ խաղաղութեան բանակցութիւններ վարեց նրա հետ: Արդիւնքում, փոխարքայ Սուրակա իբն 'Ամրը յանուն խալիֆ 'Ումայի իբն ալ-Խատտաբի ալ-Բաբուա-լ-Աբուաբի (Դերբենդի) եւ ողջ Արմինիայի բնակիչներին, որի տակ արաբ զաւթիչները պատկերացնում էին ոչ միայն Հայքը, այլեւ՝ Աղուանքն ու Վիրքը, հրովարտակ գրեց, ըստ որի նրանք անցնում էին Արաբական Խալիֆայութեան հպատակութեան եւ հովանաւորութեան տակ: Սա դարձաւ այն առաջին թուղթը, որը իրաական ձեւակերպում սահմանեց մահմեդական իշխանութիւնների եւ Հայկական Լեռնաշխարհի ու Հարաւային Կովկասի Բիզանդական Կայսրութեանը ենթակայ քրիստոնեաների միջեւ: Այս թուղթը գրուեց 652ին կնքուած ակադեմական գրականութիւնում վաղուց յայտնի հայ-արաբական դաշինքից ինը տարի առաջ:

⁸⁴ *Liber expugnationis regionum auctore Imamo Ahmed ibn Jahja ibn Djabir al-Beladsori*, էջ 183–84; *Annales quos scripsit*, էջ 2867:

⁸⁵ «Պատմութիւն Սերէոսի», էջ 539. նաեւ՝ *Chronique de Denys de Tell-Mahré*, էջ 8. նաեւ՝ *Theophanis Chronographia*, էջ 526–27:

⁸⁶ *Annales quos scripsit*, էջ 2666–67:

643ի համաձայնագրով ողջ Արմինիայի քրիստոնեաները, ստանալով կեանքի, գոյքի եւ հաւատքի նկատմամբ անձեռնմխելիութեան երաշխիքներ, պարտաւորուեցին պատրաստ լինել զինուորական հաւաքների, որպէսզի իրենց գործուն մասնակցութիւնը բերէին իսլամի թշնամիների դէմ պատերազմներում: Հակառակ դէպքում, արաբ կառավարչի 'Աբդ առ-Ռահման իբն Ռաբի'այի (643–53) օգտին (նստավայրը ալ-Բաբ, Դերբենդ) նրանք պէտք է իւրաքանչիւր տարի գլխահարկ (ջիզիա) վճարէին:

THE FIRST TREATY OF THE ARAB CALIPHATE WITH THE INHABITANTS OF “ARMĪNĪYAH”

(Summary)

ARSEN K. SHAHINYAN (a.shaginyan@spbu.ru)

According to the “father of Muslim historiography”, at-Ṭabarī (838–923), in 22 A.H. (642/3), or to be more precise, in the summer of 643, Arab conquerors from Āḡarbayḡān (Atropatene) invaded “Armīnīyah”, meaning three Christian principalities (Armenia, Iberia [K'art'li] and Albania [Aḡuank']) subject to the Byzantine Empire, and eventually occupied it in the early 8th century. In fact the Caliphate forces, led by 'Abd ar-Rahman b. Rabī'ah, Salmān b. Rabī'ah and Bukayr b. 'Abd Allah, under the general command of the Caliph's governor Surāqah b. 'Amr, reached as far as al-Bāb (Derbent) in al-Qabḡ (the Caucasus)..

Within the Armenian principality, the Muslims defeated a Greek-Armenian coalition six times their strength in the battle of Mardastan (in Vaspurakan). This forced the founder of the adjacent principality of Aḡuank', Varaz-Grigor (named Shahrvarez by at-Ṭabarī), to come to the camp of 'Abd ar-Rahman, and enter into peace negotiations with him. As a result, the governor of Surāqah b. 'Amr, on behalf of the ruling caliph 'Umar b. al-Khaṭṭāb (634–644), handed over to the inhabitants of al-Bāb wa-l-'Abwāb (Derbent) and the whole of “Armīnīyah” a letter (*al-'amān*) by which they were officially transferred to the patronage of the Arab Caliphate.

The author of the article argues that this *letter*, unknown in academic literature, was the first document that legally formalized the relations of the Caliphate with Christian subjects of the Byzantine Empire in the Armenian highlands and the Southern Caucasus. Indeed, this *al-'amān* was issued nine years before the signing of the well-known Arab-Armenian treaty of union in 652.

The paper discusses the content of the treaty focusing on the duties and rights of the Christians throughout “Armīnīyah”, like guarantees of the inviolability of persons and property, freedom of religion, taxing, and being given the freedom of choice between paying *aljizyah* and doing military service.